

ծէին : Եւսպիսի անօթներ Եւսիայէն բերաւ հետը¹ ուկիոս Եւիպիոն՝ Եւսիոքոս Թագաւորին յաղթելէն վերջը : Պոմպէոս Եւհրդատի անօթները ժողոված ըլլալով Բաղդի տաճարին ընծայեց , ու ինքը առջինը եղաւ կ'ըսէ Պլինիոս , որ Հռոմայեցւոց քարէ անօթներուն յարգը ճանչցուց , այնպէս որ ոսկիէ ամաններու հետ հազիւ կը փոխէին :

Հրապարակական խաղերու մէջ հին ատենը մրցանակի տեղ ալ կը տրուէին աս անօթները . անոր համար է որ խաղերու պատճառաւ փորուած միտալներու վրայ անօթներ կ'երևան , ոմանքնաւ ձիթենիի ձիւղերով զարդարուած : Եւ տեսակ անօթներու մէջ խիստ անուանի էր Փորթլանտի անօթը , որուն վրայ ուրիշ տեղ խօսեցանք² :

Բնդհանուր անօթներուն վրայ այսչափ խօսելէն ետքը քիչ մ'ալ Եւտրուրական անօթներուն² վրայ խօսինք : Եւսոնց մեծ մասը Կամպանիայի , մեծին (Յունաստանի ու Եւկիլիայի մէջ գտնուած են , մօտերս ալ Իտալիայի մէջ խիստ շատ ելան : Եւտրուրական անօթները զանազան ձևեր ունին . գոյներնին՝ ոմանցը սպարզ սև է , ոմանցը կարմրագոյն կամ դեղին . ոմանք փառաւոր զարդերով՝ մարդու գլուխներով ու պատկերներով զարդարուած են . աս պատկերներուն տակը երբեմն աստուածոց ու դիւցազանց անուններն ալ գրուած կ'երևան : Եւ անօթներուն վրայ եղած նկարներէն ոմանք կարմրագոյն են՝ ճերմակի հետ խառնուած : Եւ անօթներս գերեզմաններու ու դամբարաններու մէջ գտնուելէն՝ կարծեն հնագէտք Թէ աս անօթները տնական բաներու չէին գործածուէր , հապա սրբազան սեպուած էին : Եւ տեսակ անօթները շատ յարգի են՝ մէյմը իրենց ձևոյն գեղեցկութեանն ու փառաւորութեանը համար , մէյմըն ալ

որ շատ տեղեկութի կուտան հնագիտաց՝ իրենց վրայի նկարներովն ու ըզգեստներու՝ աթոռներու և ուրիշ կարասեաց ձևին համար , որ ուրիշ տեղ դժուար կ'ըլլար գտնելը :

Եւտրուրական անօթները նկարելու կերպին վրայ շատ բաներ գրուած են . հաւանական է որ անօթին վրայ կը կրպցընէին ձևով մը կտրած բարակ նիւթ՝ մեր Թուղթին պէս , ու անօթին վրայ վերնիճ կը քսէին . անով պատկերահանին ուրիշ բան չէր մնար , բայց եթէ մանր գծերը որոշել ու պատկերին գոյն տալ : Եւսպիսի անօթներուն զանազան հաւաքմանցը վրայ գրած են Եւտրոպացոցմէ Տէմփութէր , Կորի , Փասսերի , Վաիլիւս , Հանքարվիլ , Թիշպէյն ու Իթալիասքի անունով հնագէտները : Հիմակուն Եւսպիսի անօթներու հաւաքմանց մէջ շատ հարուստ ու անուանի է Վանինոյ իշխանին հաւաքմունքը :

Բ Ա Ր Ո Յ Ա Կ Ա Ն

ՆԵԼԱՅԻ ՆՕՍԳԵՐ ՈՒ ԶՈՒՆԸԱԼԻ ԴԻԳՈՒՄԵՆԵՐ

Բարեկամութիւն :

Իրեք տեսակ բարեկամ կայ . որը վրագ սէր ունի , որը վրագ փոյթ չունի , որն ալ քեզի դէմ ատելութիւն ունի :

Եւսանհուութիւն :

Եւսրդոն մէկը մինակ ու քաշուած կենալ շատ կը սիրէ եղեր . ասոր ետէն կ'իյնան որ մարդկանց մէջ մտնէ , ճար չըլլար . պատճառը կը հարցընենէ՝ պատասխան կուտայ Թէ « Եւս ընեմ . ես իմ պակասութիւններուս աւելի վարժեր եմ համբերելու քան Թէ ուրիշներուն » :